[1] Դուրս գրման ամսաթիվ		
11	Սեպտեմբեր	2018 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
11	Սեպտեմբեր	2018 թ.

Հաշիվ ապրանքագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	0571407109

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ		

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Արտադրանք, ապրանք առաքող անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)		0	6	9	0	2	0	8	7
[9] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)								
[10] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[12] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57								
[13] Լրացուցիչ տվյալներ									

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի									
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)		0	2	6	3	1	2	6	3
[15] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[16] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834							
[17] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[18] Լրացուցիչ տվյալներ									
[19] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր: Համար								
	Լիազորագիր: Ամսաթիվ								
[20] Մատակարարման (առաքման) եղանակը									
[21] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								

[22] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 28101818 բ/գ,	հատ	1	39400	39400
Ընդամենը					39400

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

11/09/2018 15:39:14

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

« 22 » հուլիսի 2018թ. քաղ.Արթիկ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական Հ.Ռ.Սահակյանս, քննարկելով վարույթիս թիվ 28101818 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018 թվականի հուլիսի 5-ին ժամը 03:00-ի սահմաններում, անհայտ անձը գողություն կատարելու դիտավորությամբ, օգտվելով Արթիկ քաղաքի Գ.Զոհրապ փողոցի 14/1 հասցեում գտնվող Անժելա Զոհրապի Կակոսյանին պատկանող բնակարանի 2-րդ հարկի դռան բաց լինելու հանգամանքից, ապօրինի մուտք է գործել վերջինիս բնակարան, այնտեղից փորձել է գողանալ զգալի չափերի արժողության գույք, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով, այն է՝ տանտիրոջ՝ Անժելա Կակոսյանի արթնանալուց և վերջինիս գոռոցը լսելուց հետո անմիջապես նույն դռնից դուրս է փախել, հանցագործությունն ավարտին չի հասցրել:

Դեպքի առթիվ 2018թ. հուլիսի 5-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետով հարուցվել է թիվ 28101818 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Տուժող Անժելա Կակոսյանը 2018 թվականի հուլիսի 9-ին ցուցմունք է տվել այն մասին, որ բնակվում է ամուսնու՝ Գևորգ Հակոբյանի, որդու՝ Մարտին Հակոբյանի և ամուսնու մոր՝ Ռոզա Հակոբյանի հետ համատեղ: Ամուսինը մոտ մեկ ամիս առաջ մեկնել է ՌԴ արտագնա աշխատաքների, որդին սովորում է Երևանի Գեղարվեստի պետական քոլեջի 4-րդ կուրսում և 2018 թվականի հունիսի 26-ից գտնվել է Երևան քաղաքում, որտեղ քննությունները տալուց և վերջացնելուց հետո 2018 թվականի հուլիսի 5-ին երեկոյան վերադարձել է տուն: Իր ննջասենյակը գտնվում է հյուրասենյակի հարևանությամբ, իսկ ամուսնու մոր և որդու սենյակները գտնվում են հյուրասենյակի վերջնամասում գտնվող միջանցքի աջ և ձախ կողմերում: 2018 թվականի հուլիսի 4-ին երեկոյան ժամը 20-ի սահմաններում իրենց տուն հյուր է գնացել ամուսնու քրոջ դուստրը՝ ՇՄ Գետափ գյուղի բնակչուհի Տաթև Մարտիրոսյանը: Նույն օրը երեկոյան ժամը 22-ի սահմաններում պառկել են քնելու, ինքը քնել է իր ննջասենյակում միայնակ, իսկ ամուսնու մայրը և քրոջ դուստրը միասին քնել են ամուսնուս մոր սենյակում: Գիշերը ժամը 03-ի սահմաններում իր ննջասենյակում մահճակալին քնած է եղել, երբ արթնացել է աչքերին ընկած լույսից և տեսել, որ մահճակալի կողքին կանգնած է բարձրահասակ մի տղամարդ, մոտ 180 սմ հասակով, նրա գլխին եղել է սև ամառային գլխարկ: Երբ արթնացել է, այդ տղամարդը ձեռքով փորձել է բերանը փակել, սակայն ինքը գոռացել է և ոտքերով հարվածել նրան, որից հետո նա դուրս է փախել սենյակից: Անմիջապես սենյակից դուրս է եկել հյուրասենյակ, ամուսնու մայրը և քրոջ դուստրը նույնպես դուրս են եկել իրենց սենյակից, սակայն որևէ մեկը հյուրասենյակում չի եղել: Տեսել է, որ հյուրսենյակից դեպի դեռևս չկառուցված պատշգամբ դուրս եկող դուռը կիսաբաց է եղել և մտածել է, որ այդ անձը տուն է մտել գողություն կատարելու համար և նույն դռնից էլ փախել է: Ամուսնու մայրը ստուգել է տան դռներն ու պատուհանները, ասել, որ բոլորը փակ են, ինքը բոլոր պատուհանները փակել է մինչև քնելը, իսկ մուտքի դուռն էլ մինչև քնելը փակել է բանալիով: Ամուսնու մայրը միայն ասել է, որ հյուրասենյակից դեպի դուրս եկող դուռն է եղել վրա հրված վիճակում և բանալիով չի փակել: Նախկինում՝ մեկ անգամ 2017 թվականի փետրվար ամսին, կոնկրետ օրը չի հիշում, գիշերը ժամը 01:30-ի սահմաններում երբ

ամուսնու հետ ննջասենյակում քնած է եղել, նկատել է, որ մեր հյուրասենյակում ինչ որ մի բարձրահասակ տղամարդ լույսը ձեռքին քայլում է: Գոռացել է իր ձայնից արթնացել են ամուսինը և ամուսնու մայրը, սակայն հյուրասենյակ դուրս գալով որևէ մեկին չեն տեսել: Որդին գտնվել է զինվորական ծառայության մեջ, տանն են եղել երեքով: Այդ անգամ իրենց տան բոլոր պատուհանները և երկրորդ հարկի հյուրասենյակի դուռը եղել են փակ վիճակում, բաց է եղել միայն առաջին հարկի մուտքի դուռը: Ամուսնու հետ տանից դուրս են եկել, որպեսզի տեսնեն, թե ում է տեսել: Դրսում ձյուն է եղել և ձյան վրա տեսնելով ինչ-որ ոտնահետքեր, գնացել են այդ ուղղությամբ: Այդ ոտնքիատեքերը տարել են դեպի Արթիկ-Սարալանջ ճանապարհի ուղղությամբ, որտեղ էլ ոտնահետքերն ավարտվել են: Ամուսինն ասել է, որ երևէի իրեն թվացել է, հնարավոր է աչքին է երևացել սակայն ինքը պնդել է, որ ինչ որ մեկին տեսել է: Ամուսինը վստահ չլինելով, որ ինչ-որ մեկը մտել է բնակարան գողություն կատարելու համար, ոստիկանություն չի դիմել: Այդ դեպքը առաջին անգամ է եղել, որից հետո միշտ անհանգիստ է եղել, ներվային համակարգի հետ սկսել է խնդիրներ ունենալ, քանի որ սկսել է հաճախակի քնած տեղը վեր թռնել, դող է զգացել: Դրանից հետո՝ 2018 թվականի հունվարի լույս մեկի գիշերը ամուսնու հետ սենյակում քնած են եղել: Գիշերը ժամը 03:30-ի սահմաններում արթնացել է ամուսնու գոռոցից, նա ասել է, որ ննջասենյակում ինչ-որ մարդ է տեսել, սակայն զննել են տունը և որևէ մեկը չի եղել: Ամուսինն ասել է, որ արդեն չգիտի ինչ է կատարվում, սկսել է կասկածել, մարդ տեսել է, թե ոչ, որի պատճառով էլ ոստիկանություն չեն դիմել: Իր ներվային համակարգն այդ օրվանից ավելի է սրվել, իրեն միշտ վատ է զգացել և արդեն չգիտի, թե իր հետ ինչ է կատարվում: 2018 թվականի հուլիսի 5-ի գիշերը իր տեսածից հետո, սկեսրոջ հետ խոսելուց վերջինս իրեն ասել է, որ հիշել է՝ հյուրասենյակի դուռը 2018 թվականի հուլիսի 4-ի երեկոյան նա է կիսաբաց վիճակում թողել: Դրանից հետո սկսել է կասկածել, թե իրականում իր ննջասենյակում մարդ տեսել է, թե իր աչքին է երևացել: Այդ դեպքից հետո՝ 2018 թվականի հուլիսի 8-ին երեկոյան ժամը 23-ի սահմաններում պառկել են քնելու, ինքը քնել է իր ննջասենյակում ամուսնու մոր՝ Ռոզայի հետ, իսկ որդին հյուրասենյակում՝ բազմոցի վրա: 2018 թվականի լույս 9-ի գիշերը ժամը 00:30-ի սահմաններում կրկին արթնացել է աչքերին ընկած լույսից և տեսել, որ նույն բարձրահասակ տղամարդը փորձել է ձեռքով փակել բերանը: Գոռացել է, վեր թռել, որից հետո սկեսուրը և որդին իրեն հանգստացրել են: Ինքն ասել է, որ էլի մարդ է մտել իրենց տուն, սակայն նրանք ասել են, որ տան դռներն ու պատուհանները փակ են եղել, բացի այդ էլ նրանք արթուն են եղել և որևէ մեկին չեն տեսել, սենյակ էլ որևէ մեկը չի մտել: Ինքը հասկացել է, որ ներվերի հետ լուրջ խնդիրներ ունի և աչքին է երևում , որ իրենց տուն մարդ է մտել: Իրեն այդ ամենը շատ իրական է թվացել և արդեն չի հասկանում, թե իր հետ ինչ է կատարվում: Ոստիկանություն է զանգել, քանի որ իրեն շատ իրական է թվացել ամեն ինչ, սակայն շարունակում է քնած տեղը իրենց տանը ինչ-որ տղամարդու տեսնել, որը իր աչքին է երևում: Մինչ օրս էլ իրեն լավ չի զգում, վախեցած է, շփոթված, վախը չափելու համար գնացել է Սպանդարյան գյուղ:

Նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև տուժող Անժելա Կակոսյանի որդին՝ Մարտին Հակոբյանը, ամուսնու մայրը՝ Ռոզա Հակոբյանը և ամուսնու քրոջ դուստրը՝ Տաթևիկ Մարտիրոսյանը:

Ստուգումամբ պարզվել է, որ Անժելա Կակոսյանը ,,Արթիկ բժշկական կենտրոն,, ՓԲ ընկերության հոգեբուժական կաբինետի հաշվառումներով չի անցնում:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատահոգեբուժական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ, 244-րդ, 248-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 28101818 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումն հանձնարարել Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Դեպքերի վերաբերյալ հաղորդում, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Անժելա Կակոսյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո՝ ապա ինչ հիվանդությամբ:

բ/ Դեպքերի վերաբերյալ հաղորդում, ցուցմունք տալու ժամանակ և ներկայումս Անժելա Կակոսյանի մոտ առկա են ժամանակավոր հիվանդագին երևույթներ, հոգեկան գործունեության խանգարումներ, եթե այո՝ ապա ինչպիսիք:

գ/ Անժելա Կակոսյանի մոտ առկա են արդյոք հոգեկան պակասություններ, որի հետևանքով նա ի վիճակի չէ ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները:

դ/ Անժելա Կակոսյանը կարող է գիտակցել իր հետ կատարվածի բնույթն ու նշանակությունը:

ե/ Անժելա Կակոսյանը դեպքերի ժամանակ կարող էր ադեկվատ ձևով ըմբռնել և վերարտադրել իրականությունը և գործի համար կարևոր հանգամանքների մասին տալ ճիշտ ցուցմունքներ:

Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան այլ հարցեր, որոնք որոշմամբ չեն առաջադրվել, սակայն դրանց պատասխանը մտնում է փորձագետների իրավասության մեջ ու դրանց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության համար՝ խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

Ավագ քննիչ՝ Հ.Ռ.ՍԱՀԱԿՅԱՆ